ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«ՄՈՒՐՃ»-ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ բացուած լինելով, ներկայ համարով ուղարկում ենք մեր բոլոր բաժանորդներին տպագրուած պատրաստ ԹԵՐԱՐՆԵՐ՝ մէջը դրած բաժանորդագրական թերթիկներով։ Խնդրում ենք բաժանորդ գրուել որքան կարելի է վաղ։ Խնդրում ենք նաև մեր ալժմեայ բաժանորդներին մեր կողմից ուղարկած աւելորդ թերարները բաժանել ծանօթների մէջ։

«Մուրճ»-ի բաժանորդներից նոքա, որոնք ներկայ 1890 թուականի բաժանորդագիրը դեռ ևս կամ բոլորովին և կամ լիովին չեն վճարել, խնդրում են այդ ապառիկները չուտով հասցնել խմբագրութեան։

ԳԻՒՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ անհրաժեշտութիւնը մեր երկրում ամենադրական կերպով ապացուցած պէտք է համարել։ Խնդրի պարզելուն և դիւղական վարկի հաստատութիւնների հետ ծանօթացնելու համար «Մուրճ»-ը արդէն, որպէս յայտնի է մեր ընթերցողներին, մի երկու մեծ յօդուածներ նուիրեց անցեալ տարի։

Ալժմ ուրախութեամբ կարող ենք յայտարարել, որ կառավարութիւնը մտադրութիւն ունի մեր կողմերի մեծ գիւղերում գիւղական փոխատու գանձարաններ հիմնելու։ Դորա համար ներքին գործերի մինիստրութիւնը դիմել է Թիֆլիսի նահանգապետին նորա կարծիքը խնդրելով, թէ Թիֆլիսի նահանգի որ գիւղերում կարելի է և որ գիւղերն են յարմար, որ այն տեղերում փոխատու գանձարաններ հիմնուեն։

Այս իրողութեան դիմաց ունենք մենք ևս պարտք կատարելու թէ ոչ։ Այս, ունենք։ Եւ այդ պարտքը կատարած կը լինենք, եթէ, տեղական հանգամանքները ի նկատի առնելով, առաջարկենք մեզանում հաստատել վարկի հիմնարկութիւններից այն, որ, իւր կազմակերպութիւնով և նպատակով, աւելի յարմար է մեր տեղական գիւղական պահանջներին համապատասխանելու համար և, միւս կողմից, աշխատանք, որ նմանօրինակ գիւղական բանկեր հիմնուեն ոչ միայն Թիֆլիսի, այլ և միւս նահանգներում։

Գր. ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՑԵԱՆԻ ՑՈԴԻԱԾԸ՝ «Սուրբ լեզու» տպագրելով «Մուրճ»-ի էջերում, պարտք ենք համարում յայտնել, որ այդ յօդուածը ոչինչ կապ չունի «Մուրճ»-ի խմբագրութեան հետ, հետեւապէս տպւում է առանց փոփոխութիւնների մեր կողմից։ Հիւրընկալելով պ. Աղայեանցի գրուածքը, մենք կամենալ ենք բազմաշխատ հեղինակին տեղ տալ արտայայտելու մի խնդրի նկատմամբ, որի մասին մեր կարծիքը յայտնի է «Մուրճ»-ի ընթերցողներին։ Հետեւապէս մնացած բոլոր կէտերի նկատմամբ պատասխանատուութիւնը թողնում ենք հեղինակի վերայ։ Յօդուածի վերջը կը տպւի յաջորդ 12-րդ №-ում։

ՑՈՒԲԵԼԵԱՆ։ Հոկտեմբերի 24-ին ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԸ, Մոսկվայում, տօնեց սուն տարւայ մայիսի 10 ին լրացած իւր 75 ամեայ գոյութեան տարեդարձը։ Այդ ուսումնարանը Ռուսահայոց մտաւոր զարգացման պատմութեան մէջ այնքան մեծ տեղ է բռնում, որ արժէր նորա գործունէութիւնը և տւած արդիւնքները դուրս բերել մի ուսումնասիրական-քննադատական յօդուածի մէջ։ Մի այդ տեսակ յօդուած «Մուրճ»-ի կողմից ուրախութեամբ կը հիւրընկալէր։

ՊՐՈՖԵՍՈՐ Դ. ՁՈՒԲԻՆՈՎԻՑ, որի 50-ամեայ գիտնական գործունէութեան համար, վրաց գրականութեան ասպարէզում, իւր ժամանակին շնորհաւորել էր «Մուրճ»-ի խմբագրութիւնը, վերջինս ստացաւ Պետերբուրգից ի նշան շնորհակալութեան յօբելեարի խրոմոլիտոգրաֆիական պատկերը։

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԱԻՍՏԻՐ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ